

# Տ. ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1964 թ. սեպտեմբերի 15-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղում:

1971-1979 թթ. սովորել է Ստեփանակերտ քաղաքի Եղիշե Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում:

1980-1982 թթ. սովորել է Ստեփանակերտի թիվ 21 պրոֆտեխուսումնարանում՝ ստանալով ավտոփականագործի մասնագիտություն:

1983-1987 թթ. աշխատել է Ստեփանակերտի էլեկտրոմեխանիկական գործարանում՝ սկզբում որպես փականագործ-հավաքող, այնուհետև՝ որպես հսկիչ:

1985-1988 թթ. ուսումը շարունակել է Երևանի էլեկտրոմեխանիկական տեխնիկումի Սպիտակի մասնաճյուղի հեռակա բաժնում, որն ավարտելով՝ ստացել է տեխնիկ-էլեկտրիկի մասնագիտություն:

1988-1992 թթ. աշխատել է Արցախի հեռուստատեսության հատուկ լուսավորման բաժնում որպես ավագ վարպետ:

1990 թ. անցել է ծառայության Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմում:

1996 թ. ձեռնադրվել է դպիր, իսկ 2000 թ.՝ սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երեք զավակ: